ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ ՀՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Խոր անտառ։ Հաստաբուն ծառերի բները գերանների պէս ցցուած մթնեցնում են խորքը։ Մի բացուած է գոյանում ուղիղ դիմացը, ուր բարձրանամ է հսկաների կիկլոպեան ամրոցը։ Մի քարէ անկանոն սանդուղք է իջնում ամրոցի դռնից։ Մէջտեղը բացատ է։ Աջ ու ձախ շաւիղներ։

ԽՈՁԵՆԻ.– (Խոշոր աչքերով, փքուած հսկա։ Գլխաբաց է, մազերն ածիլուած, միայն գագաթին մի փունջ կա։ Երկար բեղերը հասնում են մինչեւ ականջները եւ աւելի։ Փուքսի պէս է շնչում եւ երբեմն ինչ-որ ձայն է հանում, նման խոզի խորդալուն։ Գլուխը դուրս հանելով ամրոցի ատամներից՝ դես-դեն է մտիկ տալիս) Հը՛մմմ…

ԴԱՆԳԻԶ.– (Ծոյլ, դանդաղաշարժ հսկա, քնատ եւ ցաւոտ աչքերով։ Ամրոցի խորքից ծոր է տալիս) Խոոզե՛ե՛ե՛նիի։

ԽՈՁԵՆԻ.– (Նոյնպէս ծոր տալով) Ի՞նչ է՛է՛է՛…

ԴԱՆԳԻԶ.– Խոզենի՛ի՛ի՛…լսո՞ւմ ե՛ե՛ե՛ս…

ԽՈՁԵՆԻ.– Հա՛, հա՛, հա՛…Ի՞նչ է՛է՛է՛է՛…

ԴԱՆԳԻԶ.– Մի մտիկ տուր չորս կողմ, տես ինս, ջինս, մարդ, քարաւան չի՞ երեւում։

ԽՈՁԵՆԻ.– Լա՛ա՛ա՛ա՛վ (Նայում է չորս կողմը, հորանջում է, կոտրատւում եւ ապա խորդում) Հը՛ա՛մմ…

ԴԱՆԳԻԶ.– (Խորքից) Ղուզղուն, Ղոռոբուղա… (Գլուխը դուրս հանելով) Ղառաղուռա՞…

ԽՈՁԵՆԻ.– Էստեղ չեն, էստեղ չեն։

ԴԱՆԳԻԶ.– Ո՞ւր են,

ԽՈՁԵՆԻ.– Ո՛րսի են, ո՛րսի են, ո՛րսի։

ԴԱՆԳԻԶ.– (Մի կերպ հասկանում է, ապա գլուխը կծկելով ուսերի մէջ՝ ներս է ընկնում։)

ԽՈՁԵՆԻ.– (Դէպի ամրոցի խորքը թեքուելով) Աղջի Փերիշան…

ՓԵՐԻՇԱՆ.– (Միամիտ, խոշոր աչքերով, ժպտադէմ, հսկա աղջիկ։ Խորքից, երկարացնելով մինչեւ ներս գալը) Ի՞նչ է՛է՛է՛է՛…

ԽՈՁԵՆԻ.– Մեծ ապերը հրես կգա որսից։ Պղինձները դիր կրակին։